

լուսարանել խել մը մոլթ մնացած կէտեր . ինչպէս զոր օրինակ՝ արեւին ջերմութեան աստիճանը , որ տակաւին ստուգապէս դիտցուած չէ , եւ իր զանազան փոփոխութիւնները , որոնք սերտ առնչութիւն ունին մագնիսականութեան ու երկրային օդերեւութաբանութեան հետ :

Ֆլամարիոնի հետեւողութեամբ

ՀՐԱՏ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՁԲԱՆՅ ՆԻԿՈՒԱՌԻՍ ՖԻՆԻ

1900 թ. օգոստոսին Կովկաս եկան Ֆինք քոյր եղբայր զերմանացի հայազէտներն , որոնց նպատակն է հիմնովին սովորել հայերէն լեզուն : Նոքա թէպէտեւ ծանօթ են Հայոց լեզուին եւ արդէն պարզ հասկանում , միայն լեզուն եւ հայ ձեռագիրներն տեղն 'ի տեղ ուսումնասիրելու տենչանքով եկան նախ Էջմիածին , իսկ 1901 թ. սեպտ. ամսից Թիֆլիս :

Ֆրանց Նիկողաւոս Ֆինքը ծնած է Պրուսիոյ Կրեֆելդ քաղաքում 1867 թ. յունիսի 26ին : Սկզբնական կրթութիւնն առել է Կրեֆելդ քաղաքի գիմնազիայում , որտեղ 1886 թ. աւարտելով ուսման շրջանն մտնում է զօրք եւ մի տարուց յետոյ սպայ ընդունուելով՝ շարունակում է զինուորական ծառայութիւնն Պոզէն եւ Ստրազբուրգ քաղաքներում , սակայն 1891 թ. հիւանդութեան պատճառով թողնում է զինուորական ծառայութիւնն եւ Իտալիա է գնում առողջութիւնն վերականգնելու : Այնտեղից անցնում է Միւնխէն , Պարիզ եւ Մարբուրգ եւ այդ քաղաքների համալսարաններում լսում լեզուաբանութեան դասախօսութիւններ այլ եւ այլ նշանաւոր ուսուցչապետների մօտ : Մարբուրգում նա առաջին անգամ սկսում է սովորել հայերէն գրարար լեզուն : 1894 թ. ներկայացնելով Մարբուրգի համալսարանական վարչութեան «Uber das Verhältniss des baltisch-slavischen Nominalaccents zum urindogermanischen» խորագրով դիսսերտացիան , (որ 1895 թ. տղ. Մարբուրգում ,) ստացել է փիլիսոփայութեան Դօկտօրի աստիճան : Այնտեղից Ֆինք անցնում է Իրլանդիա , Դօլվէյ (Galway), եւ երեք կղզիները , եւ սկսում է ուսումնասիրել իրլանդերէն լեզուն . պարապելով այնտեղ մի տարի շարունակ եւ ապա վերադառնալով Մարբուրգ , զբւլ է իրլանդերէնի մասին : Բացի այդ կազմելով Իրլանդ-Գերման բառարան , ստացել է Մարբուրգի Համալսարանի Լեզուագիտութեան Պրիվատ-Դոցենտի աստիճանն :

Դեռ Գերմանիա եղած ժամանակ Ֆ. Ն. Ֆինքը եզնիկ վ. Գեան-
ջեցեանի եւ Յակոբ Մանանդեան հայ բանասէրների ընկերակցութեամբ
սկսեց ձեռնարկել «Հանդէս Հայագիտութեան—Zeitschrift für armenische
Philologie» պարբերական հրատարակութեան, որի ա. պրակը լոյս տեսաւ
1901 թ. վերջերը Մարբուրգում: Հանդէսը լոյս է տեսնելու տարէն չորս
անգամ եւ կը սպէ հայոց լեզուի եւ բանասիրութեան վերաբերեալ յո-
գուածներ հայերէն, գերմաներէն եւ այլ լեզուներով: Երիտասարդ հե-
ղինակը բացի այդ ունի հրատարակած արդէն մի քանի գրուածքներ
Հայոց բանասիրութեան վերաբերեալ. — «Lehrbuch der neuostarmeni-
schen Litteratursprache» (Մարբ. 1900 թ.) • Եպիփան Կիպրացու «Εκθεσις
πρωτοκλινσιῶν πατριαρχῶν τὲ καὶ μτροπολιτῶν» (Մարբ. 1901 թ.) • «Նե-
ղոս Դոքսապատսի Կարգադրութիւն պատրիարքական աթոռոյն » • (յոյն
բնագրաւ, էջմ. 1901 թ.) • «Die altfranzösischen Laute des 13 Jahrhun-
derts nach dem Zeugnis mittelarmenischer Transskriptionen» [Neuere
Sprachen] •

Ներկայումս Ֆինք քոյր եղբայրը գտնուում են Տփլիսում: Ֆ. Ֆին-
քը պարապում է ձեռագրաց ուսումնասիրութեամբ եւ միեւնոյն ժամա-
նակ թարգմանում է գերմաներէն Ղ. Աղայեանի «Արութիւն եւ Մանու-
էլ» վէպը, իսկ օր. Ագնէս Ֆինքը Ա. Ահարոնեանի «Պատկերներ»ը:

Ֆ. Ֆինքի առաջին գրական գործն է «Gedichte», որ տպուել է
1891 թ. Կրեֆելդ: Ունի ուրիշ լեզուաբանական աշխատութիւններ այլ
եւ այլ լեզուների վերաբերեալ 12 հատոր, որոնց մի առ մի թուելը
աւելորդ ենք համարում:

ՀԱՅԿ ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑ

ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Բ. ԿՈՐ-Ն-Զ-Ի-Մ, ԿՈՐ-ՈՒՍ-ԱՆ-Ե-Մ, ԿՈՐ-Ծ-ԱՆ-Ե-Մ

Այս բուն հայերէն բառերն արդէն համեմատեց Պարիզի Համալսա-
րանի ուսուցչապետներէն հմուտ հայագէտն Ա. Մէյէ (Mémoires de la
Société de Linguistique de Paris, հատ. 10, էջ 278), որուն կար-
ծիքն ընդունեց նաեւ լեզուագիտական մատենագրութեան մէջ մեծ համ-
բաւ ունեցող Հիւրշման ուսուցչապետը (Anzeiger für indogermanische
Sprach- und Altertumskunde. Beiblatt zu den Indogermanischen
Forschungen. Herausgegeben von Wilhelm Streitberg, հատ. 10, էջ 48):